

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ  
ՀՐԱՄԱՆԱԳԻՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 85-րդ հոդվածով և նպատակ ունենալով ապահովել Հայաստանի Հանրապետության մարզերում կառավարության տարածքային քաղաքականության արդյունավետ իրականացումը՝ որոշում էմ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության մարզերում տարածքային կառավարման մարմինների գործունեության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ընդունել սույն հրամանագրից բխող համապատասխան իրավական ակտեր:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի "Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին" ՆՀ-728 հրամանագիրը:
4. Սույն հրամանագիրն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության  
Նախագահ

Ս. Սարգսյան

Հավելված  
ՀՀ Նախագահի  
2010 թվականի «\_\_\_\_\_» է\_\_\_\_,  
ՆՀ-\_\_\_\_-Ն հրամանագրի

ԿԱՐԳ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐՈՒՄ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մարզերում Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության (այսուհետ՝ տարածքային կառավարում) ոլորտի հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, սույն հրամանագրով և այլ իրավական ակտերով:

2. Մարզերում տարածքային կառավարումն իրագործվում է պետական և համայնքային շահերի ներդաշնակ իրականացման, ինչպես նաև մարզպետների և հանրապետական գործադիր մարմինների (այսուհետ՝ գործադիր մարմին) ու գործադիր մարմինների տարածքային ծառայությունների (այսուհետ՝ տարածքային ծառայություն) համագործակցության և գործողությունների փոխհամաձայնեցման միջոցով:

3. Մարզպետը իրագործում է կառավարության տարածքային քաղաքականությունը, համակարգում է տարածքային ծառայությունների գործունեությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

4. Մարզպետը օրենքներով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված իրավասության սահմաններում, մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունն իրագործում է հետևյալ բնագավառներում՝

- 1) ֆինանսներ.
- 2) տնտեսական զարգացում.
- 3) սոցիալական ապահովություն.
- 4) առողջապահություն.
- 5) կրթություն.
- 6) քաղաքաշինություն.
- 7) տրանսպորտ և ճանապարհաշինություն.
- 8) գյուղատնտեսություն և հողօգտագործում.
- 9) բնության և շրջակա միջավայրի պահպանություն.
- 10) մշակույթ.
- 11) սպորտ և երիտասարդության հարցեր.
- 12) պաշտպանություն.
- 13) միջազգային համագործակցություն.
- 14) արտակարգ իրավիճակներ և քաղաքացիական պաշտպանություն.

## II. ՄԱՐԶՊԵՏԸ

5. Մարզպետը պաշտոնի նշանակվում և ազատվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Մարզպետի նշանակելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները վավերացվում են Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից:

Մարզպետը հաշվետու և պատասխանատու է Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի առջև:

6. Մարզպետը՝

1) մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային քաղաքականության մշակման աշխատանքներին.

2) օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովում է մարզի տարածքում Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը.

3) օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին, կամ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարություն:

4) խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերին.

5) նպաստում է մարզում ժողովրդավարական համակարգի զարգացմանը և

պաշտպանմանը, օրենքների գերակայության ապահովմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը, մարդու իրավունքների, ազատության և տեղեկատվության մատչելիության ապահովմանը.

6) ապահովում է մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհամաձայնեցնում և ստորագրում է միջազգային պայմանագիր չհանդիսացող միջազգային բնույթի փաստաթղթեր.

8) քննության է առնում գործադիր մարմինների կողմից մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ առաջարկությունները և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում այդ մարմիններին տեղեկացնում է ձեռնարկված միջոցների մասին.

9) ամենամյա հաշվետվություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն՝ իր գործունեության և մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի մասին, ընթացիկ հաշվետվություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության վարչապետին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին:

10) օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակում միջոցներ է ձեռնարկում մարզային ենթակայության գույքի պահպանման և արդյունավետ օգտագործման ուղղությամբ, իսկ ոչ մարզային ենթակայության պետական գույքի պահպանման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում լիազոր մարմնին:

11) իր իրավասության սահմաններում, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունում է որոշումներ և կարգադրություններ, տալիս է ցուցումներ, առանց լիազորագրի հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության անունից:

Մարզպետի ընդունած որոշումները և կարգադրությունները 3-օրյա ժամկետում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն՝ իրավական հսկողություն իրականացնելու նպատակով:

Մարզպետի օրենսդրությանը հակասող որոշումները և կարգադրությունները ուժը կորցրած են ճանաչվում Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ կամ անվավեր են ճանաչվում դատարանի որոշմամբ:

12) օրենսդրությամբ սահմանված կարգով կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում մարզային ենթակայության կազմակերպությունների գործադիր մարմնի կամ կոլեգիալ կառավարման մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները:

13) հանդիսանում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետը:

14) հանդիսանում է մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահն:

15) գործում է թափանցիկ և հրապարակային, մարզին առնչվող հիմնախնդիրները և իր ընդունած որոշումները ու արձակած կարգադրությունները հրապարակում է մարզպետարանի ինտերնետային կայք էջում:

16) Հայաստանի Հանրապետությունից բացակայելու դեպքում իր բացակայությունը համաձայնեցնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունի հետ:

17) իրականացնում է քաղաքացիների ընդունելություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի կողմից սահմանված կարգով:

18) օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով կնքում ու լուծում է աշխատանքային պայմանագրեր մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարների հետ:

19) իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

7. Կառավարության տարածքային քաղաքականությունը մարզում ապահովվում է տեղակալի (տեղակալների), խորհրդականի (խորհրդականների), օգնականի (օգնականների), մարզպետարանի աշխատակազմի, մարզային ենթակայության կազմակերպությունների, ինչպես նաև տարածքային ծառայությունների համակարգման միջոցով:

8. Մարզպետի բացակայության ժամանակ մարզպետին փոխարինում է մարզպետի տեղակալներից մեկը:

9. Մարզպետի նստավայրը և մարզպետարանի շենքը գտնվում են մարզի վարչական կենտրոնում: Մարզպետարանի շենքի վրա տեղադրվում է Հայաստանի Հանրապետության դրոշը, իսկ մարզպետի աշխատասենյակում Հայաստանի Հանրապետության դրոշը և Հայաստանի Հանրապետության զինանշանը:

10. Մարզպետի կողմից կատարված աշխատանքները ենթակա են գնահատման Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

III. ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ (ՏԵՂԱԿԱԼՆԵՐ), ԽՈՐՀՐԴԱԿԱՆ (ԽՈՐՀՐԴԱԿԱՆՆԵՐ) ԵՎ ՕԳՆԱԿԱՆ (ՕԳՆԱԿԱՆՆԵՐ)

11. Մարզպետի տեղակալին (տեղակալներին) պաշտոնի է նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ մարզպետի առաջարկությամբ:

12. Մարզպետի խորհրդականի (խորհրդականների) և օգնականի (օգնականների) պաշտոնների թվաքանակը սահմանվում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

13. Մարզպետի խորհրդականին (խորհրդականներին) և օգնականին (օգնականներին) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է մարզպետը:

IV. ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ, ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

14. Մարզպետարանը կառավարում է մարզպետը:

15. Մարզպետարանի կանոնադրությունը և կառուցվածքը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի ներկայացմամբ հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ աշխատողների թվաքանակը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետը:

Մարզպետարանի կանոնադրությունը և կառուցվածքը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված մարզպետարանի օրինակելի կանոնադրությանը և կառուցվածքին:

16. Մարզպետարանի աշխատակազմն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև մարզպետարանի կանոնադրությամբ սահմանված գործառույթներ ու լիազորություններ:

17. Մարզպետարանի աշխատակազմի գործունեության կազմակերպումն ու ղեկավարումն իրականացնում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը:

V. ՄԱՐԶՊԵՏԻ ԿԱՄ ՆՐԱ ՏԵՂԱԿԱԼԻ (ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ) ՆԿԱՏՄԱՍԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓՈՒՄՆԵՐԸ, ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺԵՐԸ ԵՎ ԽՐԱԽՈՒՍԱՆՔՆԵՐԸ

18. Մարզպետը և (կամ) մարզպետի տեղակալը (տեղակալները) չեն կարող լինել համայնքի ավագանու անդամ, զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի մանկավարժական, գիտական և ստեղծագործական աշխատանքից, և անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ:

19. Մարզպետի կամ նրա տեղակալի (տեղակալների) նկատմամբ կարող է կիրառվել խրախուսանք կամ կարգապահական տույժ:

20. Երկարամյա աշխատանքի, պաշտոնեական պարտականությունները բարեխիղճ և օրինակելի կատարելու, ինչպես նաև հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար մարզպետի կամ նրա տեղակալի նկատմամբ կարող են կիրառվել խրախուսանքի հետևյալ միջոցները՝

- 1) շնորհակալության հայտարարում.
- 2) միանվագ դրամական պարգևատրում.
- 3) հուշանվերով պարգևատրում.
- 4) լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում.
- 5) կարգապահական տույժի հանում:

21. Պաշտոնեական պարտականությունները օրենքով սահմանված կարգով չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, ինչպես նաև ծառայողական լիազորությունները վերազանցելու դեպքերում, մարզպետի կամ նրա տեղակալի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) պաշտոնից ազատում:

22. Մարզպետի նկատմամբ սույն կարգով նախատեսված կարգապահական տույժերը և խրախուսանքի միջոցները կիրառում են Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը և (կամ) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարը, իսկ 21-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված կարգապահական տույժը՝ միայն պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը:

23. Մարզպետի տեղակալի նկատմամբ սույն կարգով նախատեսված կարգապահական տույժերը և խրախուսանքի միջոցները կիրառում են Հայաստանի Հանրապետության վարչապետը և (կամ) Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարը, իսկ 21-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված կարգապահական տույժը՝ միայն պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը:

24. Մարզպետը կարող է պարգևատրել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա քաղաքացիներին:

VI. ՄԱՐԶՊԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ

25. Մույն կարգի 4-րդ կետով նախատեսված բնագավառներում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացնելիս մարզպետն ունի հետևյալ լիազորությունները՝

1) Ֆինանսների բնագավառում մարզպետը՝

ա. օրենսդրությամբ սահմանված կարգով մշակում և տարածքային կառավարման նախարարության միջոցով կառավարության քննարկմանն առաջարկություններ է ներկայացնում պետական բյուջեի նախագծի՝ մարզին վերաբերող հատվածի վերաբերյալ.

բ. օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է պետական բյուջեով մարզպետարանին հատկացված միջոցները.

գ. ապահովում է մարզի տարածքում համայնքների կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար սուբվենցիաների գծով բյուջետային հայտերի սահմանված կարգով ներկայացումը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն և ըստ այդ ծրագրերի ոլորտային պատկանելիության՝ համապատասխան պետական կառավարման մարմին: Իր լիազորությունների շրջանակներում աջակցում է պետական բյուջեից հատկացված սուբվենցիաների հաշվին ֆինանսավորվող ծրագրերի և միջոցառումների իրականացմանը: Օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է պետական բյուջեից համայնքներին դոտացիաների ձևով տրամադրվելիք հատկացումների չափերի հաշվարկման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը և տրամադրումը տարածքային կառավարման նախարարություն.

դ. մեթոդական և խորհրդատվական օգնություն է ցույց տալիս համայնքի բյուջեի նախագծի մշակման ընթացքում, օրենքով սահմանված կարգով վերահսկում է համայնքների բյուջետային գործընթացը և պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացված միջոցների ընթացիկ ֆինանսավորումը.

ե. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ.

2) Տնտեսական զարգացման բնագավառում մարզպետը՝

ա. իրականացնում է մարզային զարգացման տարեկան և միջնաժամկետ ծրագրերի մշակման աշխատանքները և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը.

բ. վերլուծում է մարզային կտրվածքով ոլորտային սոցիալ-տնտեսական վիճակագրական ցուցանիշները և լիազոր մարմին ներկայացնում համապատասխան առաջարկություններ.

գ. աջակցում է մարզում ձեռնարկատիրության զարգացմանը, այդ թվում փոքր և միջին ձեռնարկատիրության.

դ. աջակցում է մարզում գործարար և ներդրումային բարենպաստ դաշտի ձևավորմանը.

ե. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով տարեկան կտրվածքով իրականացնում է մարզի տնտեսական ներուժի գույքագրում և արդյունքների մասին հաշվետվություն է ներկայացնում լիազոր մարմնին.

զ. ձեռնարկում է միջոցներ մարզում մասնավոր ներդրումների ներգրավման և նոր աշխատատեղերի ստեղծման ուղղությամբ.

է. բացահայտում է մարզում տնտեսական զարգացման հնարավորությունները, իրականացնում իրազեկման աշխատանքներ և լիազոր մարմնին ներկայացնում է առաջարկություններ.

ը. ուսումնասիրում է մարզի տարածքում տնտեսական մրցակցության իրավիճակը և անբարեխիղճ մրցակցության հայտնաբերման դեպքում լիազոր մարմին ներկայացնում է առաջարկություններ.

թ. լիազոր մարմնից ստանում է տեղեկատվություն լիցենզավորված կազմակերպությունների վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում լիազոր մարմին ներկայացնում է առաջարկություն լիցենզավորված կազմակերպությունների գործունեության վերաբերյալ.

ժ. մշակում և լիազոր մարմնին առաջարկություններ է ներկայացնում մարզում զբոսաշրջության զարգացման ծրագրերի վերաբերյալ, ապահովում է զբոսաշրջության զարգացման մշակված ծրագրերի իրականացումն և արդյունքների մասին լիազոր մարմնին ներկայացնում է հաշվետվություններ.

ժա. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով իրականացնում է զբոսաշրջային ռեսուրսների ամենամյա գույքագրում և արդյունքները ներկայացնում լիազոր մարմնին.

ժբ. ուսումնասիրում է մարզում «Առևտրի և ծառայությունների մասին» և «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների պահանջների կատարումը, անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում լիազոր մարմնին.

ժգ. կազմակերպում և համակարգում է մարզի և համայնքների վարչական ռեգիստրների ձևավորման գործընթացը, ինչպես նաև համակարգում է այդ ռեգիստրների տվյալների փոխանակման գործընթացը.

ժդ. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ գործառնություններ:

3) Մոնիթինգային ապահովության բնագավառում մարզպետը՝

ա. օրենքով սահմանված կարգով իրականացնում է բնակչության պետական սոցիալական աջակցության ծրագրերը, կազմակերպում է մարզային ենթակայության սոցիալական ապահովության կազմակերպությունների գործունեությունը.

բ. ուսումնասիրում և վերլուծում է բնակչության զբաղվածությունը և աջակցում է աշխատատեղերի ստեղծման գործընթացին.

գ. օրենքով սահմանված կարգով աջակցում է սոցիալական պաշտպանության ոլորտում ծրագրեր իրականացնող կազմակերպությունների գործունեությանը.

դ. օրենքով սահմանված կարգով համայնքի ղեկավարից ստանում է համապատասխան տեղեկատվություն մարզում ինստիտուցիոնալ և հոգաբարձության մարմինների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ և ներկայացնում լիազոր մարմնին.

ե. իրականացնում է մարզում ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության պետական քաղաքականությունը.

զ. աջակցում է մարզում ժողովրդագրական պետական ծրագրերի իրականացմանը.

է. աջակցում է մարզում փախստականների բնագավառում պետական ծրագրերի իրականացմանը.

ե. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

4) Առողջապահության բնագավառում մարզպետը՝

ա. իր իրավասության շրջանակներում ապահովում է մարզի տարածքում պետական առողջապահական ծրագրերի իրականացումը.

բ. հաստատում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանն ուղղված տեղական ծրագրերը և ապահովում է դրանց իրականացումը.

գ. օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմնի առաջարկությամբ ընդունում է որոշումներ զանգվածային հիվանդությունների և թունավորումների, վարակիչ հիվանդությունների համաճարակների առաջացման դեպքում մարզում կարանտին կամ սահմանափակող միջոցառումներ մտցնելու և դրանք չեղյալ հայտարարելու մասին: Աջակցում է վարակիչ և զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների և թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպմանը և ապահովում դրանց իրականացումը.



դ. աջակցում է պետական հիգիենիկ և հակահամաճարակային մարմիններին՝ բնակավայրերի ջրամատակարարման աղբյուրների, բնակելի շենքերի, դպրոցների և այլ օբյեկտների սանիտարական վիճակի նկատմամբ վերահսկողության աշխատանքների իրականացման գործընթացին և օրենքով սահմանված կարգով միջոցներ է ձեռնարկում մարզային ենթակայության կազմակերպություններում սանիտարական կանոնների և նորմերի խախտումների վերացման ուղղությամբ.

ե. պետական ծրագրերի շրջանակում աջակցում է բժշկական կադրերի վերապատրաստման և վերաորակավորման աշխատանքների կազմակերպմանը, աջակցում է մարզ ժամանակավոր գործուղված կադրերի գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը.

զ. իրազեկում է լիազոր մարմնին մարզում տեղի ունեցած արտակարգ իրավիճակների մասին և աջակցում է լիազոր մարմնին բնակչությանը բժշկական օգնության կազմակերպման աշխատանքների իրականացմանը.

է. ապահովում է մարզային ենթակայության առողջապահական կազմակերպությունների ղեկավար կադրերի որակավորումը /ատեստավորում/ և մրցույթների կազմակերպման գործընթացը.

ը. աջակցում է բնակչության առողջապահական հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման աշխատանքների իրականացմանը և ապահովում է առողջության վերաբերյալ հանրային իրազեկման ծրագրերի իրականացումը.

թ. միջոցներ է ձեռնարկում բուժհաստատությունների կրեդիտորական պարտքերի վերացման և առողջապահական կազմակերպությունների եկամտաբեր գործունեությունն ապահովելու ուղղությամբ.

ժ. ապահովում է մարզային ենթակայության առողջապահական կազմակերպությունների բնականոն գործունեությունը.

ժա. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

5) Կրթության բնագավառում մարզպետը՝

ա. ապահովում է մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը.

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով մասնակցում է պետական ուսումնական հաստատությունների ուսուցիչների որակավորմանը (ատեստացիային).

գ. ապահովում է համապատասխան պայմաններ մարզային ենթակայության ուսումնական հաստատություններում սովորողների և շրջանավարտների գիտելիքների գնահատման կամ թեստավորման գործընթացի իրականացման համար.

դ. օրենքով սահմանված կարգով համակարգում և վերահսկում է դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը և ապահովում է նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություններ.

ե. օրենքով սահմանված կարգով վերահսկում է մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների կողմից Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը.

զ. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

6) Քաղաքաշինության բնագավառներում մարզպետը՝

ա. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եզրակացություն է տալիս քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման առաջադրանքների և նախագծերի վերաբերյալ.

բ. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկություններ է ներկայացնում մարզի համայնքների վարչական սահմանների փոփոխման վերաբերյալ.

գ. աջակցում է մարզում համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի մշակման գործընթացին.

դ. օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների քաղաքաշինական գործունեության, ինչպես նաև համայնքների ղեկավարների կողմից ինքնակամ շինարարության կանխարգելման, կասեցման և օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացման նկատմամբ.

ե. հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մարզային ենթակայության կառույցների վերանորոգման, կապիտալ նորոգման աշխատանքների իրականացման պատվիրատուն և օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում աշխատանքների որակի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ժամկետներում իրականացման համար.

զ. օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում մարզում բոլոր աղբյուրներով իրականացվող կապիտալ ծրագրերի նկատմամբ.

է. օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնից ընդունում է մարզում կապիտալ ծրագրերով կառուցված մարզային ենթակայության կառույցները և իրականացնում է այդ կառույցների պահպանումը.

ը. օրենքով սահմանված կարգով համայնքների ղեկավարներից հավաքագրում, ամփոփում և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով լիազոր մարմնին է ներկայացնում մարզում քաղաքաշինական գործունեության մոնիթորինգի արդյունքները.

թ. աջակցում է մարզի տարածքում բնակարանային ապահովման, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի կառավարման և պահպանման պետական ծրագրերի իրականացմանը,

ժ. Հաստատված պետական ծրագրերի շրջանակում մարզի տարածքում կազմակերպում է վտանգավոր երկրաբանական երևույթներից (սողանք, քարաթափ և այլն) պաշտպանության ուղղությամբ անհրաժեշտ հետազննությունները, համապատասխան միջոցառումների ծրագրերի մշակումը և աշխատանքների իրականացումը.

ժա. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցնում կամ լիազոր մարմնի համաձայնեցմանն է ներկայացնում համայնքների վարչական սահմաններում առանց հողի կատեգորիայի փոփոխության քաղաքաշինական նպատակներով առանձին հողամասերի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ առաջարկությունները.

ժբ. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

7) Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառներում մարզպետը՝

ա. հանդիսանում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մարզի տարածքում միջպետական նշանակության, Հանրապետական նշանակության և մարզային նշանակության ճանապարհների ընթացիկ նորոգման, պահպանման ու շահագործման աշխատանքների իրականացման պատվիրատուն և օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում աշխատանքների որակի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ժամկետներում իրականացման համար.

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով լիազոր մարմնից ընդունում է նոր կառուցված և (կամ) կապիտալ վերանորոգված ավտոճանապարհները և օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում դրանց ընթացիկ նորոգման, պահպանման և շահագործման համար.

գ. աջակցում է համայնքային նշանակության ճանապարհների և ինժեներական կառույցների շինարարության, պահպանման ու շահագործման աշխատանքների կազմակերպմանը.

դ. ուսումնասիրում է միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոճանապարհների պաշտպանական գոտիներում շինությունների և հաղորդակցուղիների առկայության օրինականությունը, և խախտումներ հայտնաբերելու դեպքում դիմում է լիազոր մարմնին՝ օրենքով սահմանված կարգով միջոցներ ձեռնարկելու համար.

ե. տալիս է մարզային նշանակության ճանապարհներին գովազդային վահանակների տեղադրման թույլտվություն.

զ. մարզի տարածքում կազմակերպում է ավտոճանապարհներին հարակից մասերում սանմաքրման և քարաթափերի կանխարգելման աշխատանքներ.

է. կազմակերպում է ներմարզային հասարակական տրանսպորտի աշխատանքը,

ը. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

8) Գյուղատնտեսության և հողօգտագործման բնագավառներում մարզպետը՝

ա. աջակցում է գյուղատնտեսական մթերքների իրացման աշխատանքներին.

բ. աջակցում է ագրոպարենային ոլորտում տնտեսավարող սուբյեկտներին՝ արտադրության կազմակերպման և զարգացման գործում.

գ. ապահովում է մարզի տարածքում գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործման ծավալի աճին միտված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների կատարումը.

դ. աջակցում է ագրոպարենային ոլորտում տնտեսավարման առավել արդյունավետ ձևերի (մասնավորապես՝ գյուղատնտեսական կոոպերացիայի) զարգացմանը.

ե. օրենքով սահմանված կարգով համայնքների ղեկավարներից հավաքագրում, ամփոփում և լիազոր մարմնին (մարմիններին) է ներկայացնում մարզի հողային հաշվեկշիռը, ինչպես նաև ցանքատարածությունների, անասնազվաքանակի, սպասվելիք և փաստացի ստացված բերքի վերաբերյալ տեղեկատվություն.

զ. ձեռնարկում է միջոցներ մարզում ապօրինի հողօգտագործման կասեցման և վերացման ուղղությամբ.

է. լիազոր մարմնի միջոցով առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ հողային հարաբերությունների բնագավառում իրականացվող ծախսատար ծրագրերի դեպքում համայնքներին աջակցելու վերաբերյալ.

ը. իր իրավասության սահմաններում մասնակցում է մարզի տարածքում ոռոգման ջրի մատակարարման և ջրահեռացման խնդիրների լուծմանը, ինչպես նաև աջակցում է մարզում ոռոգման ջրի վարձավճարների հավաքագրման գործընթացին.

թ. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

9) Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառներում մարզպետը՝

ա. աջակցում է բնապահպանական պետական ծրագրերի իրականացմանը.

բ. մասնակցում է բնության հատուկ պահպանվող տարածքներին, բուսաբանական այգիներին, դենդրոպարկերին, անտառներին և անտառտնկարկներին առնչվող պետական ծրագրերի և կառավարման պլանների մշակման աշխատանքներին, ինչպես նաև որսագողության, ապօրինի ձկնորսության, ծառահատումների դեմ կազմակերպվող միջոցառումների իրականացմանը.

գ. իրագեկում է համապատասխան մարմնին մարզում անտառային հրդեհների վերաբերյալ և աջակցում է հրդեհների մարման աշխատանքներին.

դ. համագործակցում է բնապահպանական խնդիրներ իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիների հետ:

ե. օրենքով սահմանված կարգով հսկողություն է իրականացնում աղբահանության նկատմամբ և աջակցում է աղբի ու թափոնների վերամշակում իրականացնող կազմակերպություններին.

զ. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

10) Մշակույթի բնագավառում մարզպետը՝

ա. իր իրավասության սահմաններում ապահովում է պետական մշակութային քաղաքականության իրականացումը մարզում.

բ. ապահովում է մարզային ենթակայության մշակութային կազմակերպությունների գործունեության իրականացումը, կազմակերպում է մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ, նպաստում է ավանդական ազգային ծեսերի վերականգնմանն ու տարածմանը.

գ. օրենքով սահմանված կարգով միջոցներ է ձեռնարկում մարզի տարածքում պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ.

դ. աջակցում է հանգստի գոտիների ստեղծման, պահպանման ու շահագործման աշխատանքներին.

ե. համագործակցում է մարզի տարածքում գործող պետական գրանցում ունեցող կրոնական կազմակերպությունների հետ.

զ. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

11) Սպորտի և երիտասարդության հարցերի բնագավառներում մարզպետը՝

ա. ապահովում է մարզային ենթակայության սպորտային կազմակերպությունների գործունեության իրականացումը.

բ. մշակում և հաստատում է մարզի տարածքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման առաջնային ուղղությունները, միջոցներ է ձեռնարկում մարզի տարածքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում պետական ծրագրերի իրագործման ուղղությամբ, ապահովում է հանրապետական մարզական միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերի անցկացումը.

գ. աջակցում է մարզում գործող մարզական կազմակերպություններին, մարզաձևերի զարգացման, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի նյութատեխնիկական բազայի ամրապնդման գործընթացում.

դ. աջակցում է մարզական կազմակերպությունների հանրապետական առաջնություններին, միջազգային մրցումներին մարզի և համայնքների մարզիկների ու թիմերի մասնակցությանը.

ե. աջակցում է մարզի տարածքում երիտասարդության շրջանում տարվող աշխատանքների բարելավման և այդ բնագավառում նպատակային ու արդյունավետ պետական քաղաքականության իրականացմանը.

զ. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

12) Պաշտպանության բնագավառում մարզպետը՝

ա. աջակցում է մարզում զինված ուժերի զորահավաքին ուղղված աշխատանքներին և պարտադիր զինվորական ծառայության գորակոչի իրականացմանը.

բ. օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատում է տեղական գորակոչային հանձնաժողովների կազմը և միջոցներ է ձեռնարկում տեղական գորակոչային հանձնաժողովների անդամների փոփոխության առումով.

գ. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

13) Միջազգային համագործակցության բնագավառում մարզպետը՝

ա. ապահովում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերով՝ իր իրավասության ոլորտներին վերաբերող դրույթների և/կամ միջոցառումների կատարումը.

բ. իրականացնում է աշխատանքային, ուսուցողական, ճանաչողական այցեր օտարերկրյա պետությունների տարածքային միավորներ և միջազգային կազմակերպություններ, ընդունում է մարզ այցելող օտարերկրյա պետությունների տարածքային միավորների, միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց.

գ. իրականացնում է աշխատանքային, ուսուցողական, ճանաչողական այցեր օտարերկրյա պետությունների տարածքային միավորներ և միջազգային կազմակերպություններ, ընդունում է մարզ այցելող օտարերկրյա պետությունների տարածքային միավորների, միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց,

դ. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

14) Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառում մարզպետը՝

ա. օրենքով սահմանված կարգով կազմակերպում է մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերի մշակումն ու համակարգում է այդ ծրագրերում նախատեսված աշխատանքները.

բ. մասնակցում է պետական համապատասխան ծրագրերով նախատեսված՝ արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման, ինչպես նաև օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացմանը.

գ. իր իրավասությունների սահմաններում կազմակերպում և ղեկավարում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումները, հաստատում և գործողության մեջ է դնում մարզային քաղաքացիական պաշտպանության պլանները.

դ. օրենքով սահմանված կարգով տեղական ինքնակառավարման մարմիններին, կազմակերպություններին և բնակչությանը ներգրավում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումներին.

ե. մասնակցում, ինչպես նաև իր իրավասության սահմաններում ապահովում է բնակչության տարահանումը, պատսպարումը և այլ օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացումը:

զ. իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

## VII. ՄԱՐԶՊԵՏԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

26. Մարզպետը համակարգում է գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Մարզպետի համակարգման ոլորտում գտնվող գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

27. Մարզում գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգումը, մարզպետին օրենսդրությամբ վերապահված իրավասության սահմաններում, ընդգրկում է՝

1) գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզպետարանի աշխատակազմի ու տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ և համաձայնեցված գործունեության կազմակերպումը:

2) օրենսդրությամբ սահմանված այլ լիազորությունների իրականացում:

28. Մարզպետը տալիս է գրավոր ցուցումներ մարզպետի համակարգման ոլորտում գտնվող գործադիր մարմնի տարածքային ծառայությունների ղեկավարներին՝ տարածքային ծառայության ղեկավարի արդյունավետ գործունեության վերաբերյալ:

Մարզպետի ներկայացրած դիրքորոշման հետ տարածքային ծառայության ղեկավարի չհամաձայնվելու դեպքում մարզպետը դիմում է համապատասխան գործադիր մարմնի ղեկավարին այդ մասին անմիջապես տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին:

Գործադիր մարմնի ղեկավարը քննարկում է մարզպետի բարձրացրած հարցը և եռօրյա ժամկետում գրավոր ներկայացնում է առաջարկություն:

29. Մարզպետը կազմակերպում է խորհրդակցություններ մարզպետի համակարգման ոլորտում գտնվող տարածքային ծառայությունների ղեկավարների մասնակցությամբ և տարածքային ծառայությունների ղեկավարներին ներկայացնում ու ստանում է առաջարկություններ, օժանդակում է տարածքային ծառայությունների գործունեությանը, ապահովում դրանց համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ու բնակչության հետ:

Մարզպետը տարածքային ծառայության ղեկավարի հետ համաձայնեցված ժամկետում տարածքային ծառայությունների ղեկավարներից ստանում է տեղեկատվություն մարզպետի ներկայացրած առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

30. Մարզպետի համակարգման ոլորտում գտնվող տարածքային ծառայությունների ղեկավարները իրենց տարեկան աշխատանքային ծրագրերը համաձայնեցնում են մարզպետի հետ:

Տարածքային ծառայության տարեկան աշխատանքային ծրագիրը մարզպետի հետ չհամաձայնեցնելու դեպքում մարզպետը դիմում է համապատասխան գործադիր մարմնի ղեկավարին այդ մասին անմիջապես տեղեկացնելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին:

31. Մարզպետը կարող է համապատասխան գործադիր մարմնի ղեկավարին ներկայացնել գրավոր, հիմնավորված առաջարկություն տվյալ գործադիր մարմնի տարածքային ծառայության գործունեության, ինչպես նաև տարածքային ծառայության ղեկավարի զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության վերաբերյալ:

Գործադիր մարմնի ղեկավարը պարտադիր քննության է առնում մարզպետի առաջարկությունը, ձեռնարկում է համապատասխան միջոցներ և արդյունքների մասին 7-օրյա ժամկետում տեղեկացնում մարզպետին:

Գործադիր մարմնի ղեկավարի կողմից կայացրած որոշման հետ չհամաձայնվելու դեպքում մարզպետը հարցը կարող է ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետին:

32. Մարզպետը մարզի տարածքում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տարածքային ծառայությունների ղեկավարների հետ անց է կացնում խորհրդակցություններ և վերջիններիս ուշադրությունն է հրավիրում մարզում ծագած խնդիրների լուծման անհրաժեշտության վրա:

33. Մարզի տարածքում հասարակական կարգի պահպանման և ամրապնդման նպատակով մարզպետն իրավասու է Հայաստանի Հանրապետության կառավարության առնչքեր ուստիկանության և ազգային անվտանգության ոլորտի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներին հանձնարարականներ տալ և կարգադրություններ անել՝

1) տարերային և տեխնոլոգիական աղետների վտանգի նվազեցման, դրանց հետևանքների վերացման, մարզի տարածքում քաղաքացիական պաշտպանության, հակահամաճարակային և կարանտինային հատուկ միջոցառումների կազմակերպման վերաբերյալ.

2) ապօրինի շինարարության, ընդերքի օգտագործման, ապօրինի ծառահատումների, ինչպես նաև հողազավթումների և որսագողության դեպքերի կանխման և արգելման վերաբերյալ.

3) ժողովների, հանրահավաքների, երթերի, ցույցերի և այլ զանգվածային միջոցառումների անցկացման ընթացքում հասարակական կարգի պահպանման վերաբերյալ.

4) համայնքներում զինապարտների կցագրման ու գորակոչի, գորահավաքի և վարժական հավաքների անցկացումը կազմակերպելու վերաբերյալ:

34. Մարզպետը օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում մարզում քաղաքացիական պաշտպանության պատրաստականության համար, օրենքով իրեն վերապահված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

Օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում մարզպետը կազմակերպում և համակարգում է մարզի տարածքում համապատասխան մարզային ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման, տարերային և տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման և հետևանքների վերացման ուղղությամբ աշխատանքները, մասնակցում է հանրապետական համապատասխան ծրագրերով նախատեսված, ինչպես նաև օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացմանը, տեղական ինքնակառավարման մարմիններին, բնակչությանը ներգրավում է քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման, տարերային և տեխնոլոգիական աղետների հետևանքների վերացման աշխատանքներին:

Մարզպետը իր իրավասության սահմաններում համապատասխան հանձնարարականներ է տալիս և կարգադրություններ անում արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության ոլորտի տարածքային ծառայության ղեկավարին:

35. Մարզպետը հրավիրում և անց է կացնում խորհրդակցություն մարզի տարածքում կապի էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման և գազամատակարարման ոլորտներում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց հետ և նրանց ուշադրությունն է հրավիրում ծագած խնդիրների լուծման անհրաժեշտության վրա:

36. Մարզպետը համագործակցում է գործադիր մարմինների հետ և դրանց քննարկմանն է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերաբերող մարզին առնչվող հարցերը:

37. Մարզպետը օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում գործադիր մարմնին մարզում տիրող իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև գործադիր մարմնից ստանում է իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն:

38. Օրենսդրությամբ սահմանված կարգով գործադիր մարմինների կողմից մարզպետարանում, մարզպետարանի ենթակայությամբ գործող կազմակերպություններում, համայնքի ղեկավարի աշխատակազմում, համայնքային ենթակայությամբ գործող կազմակերպություններում իրականացված ստուգումների արդյունքները քննարկվում են մարզպետի հետ, որից հետո կազմվում է համապատասխան փաստաթուղթ:

VIII. ՄԱՐԶՊԵՏԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

39. Մարզպետը իրականացնում է իրավական ու մասնագիտական հսկողություն՝ համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ:

Մարզպետը իրավական և մասնագիտական հսկողությունն իրականացնում է իրավական հսկողության բարձրագույն մարմնի հաստատած ամենամյա աշխատանքային ծրագրին համապատասխան:

40. Մարզպետը յուրաքանչյուր կիսամյակ անմիջականորեն, իսկ անհրաժեշտության դեպքում նաև աշխատակազմի միջոցով համայնքներում իրականացնում է համայնքի ղեկավարի կիսամյակային հաշվետվությունների ամփոփում և արդյունքները ներկայացնում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն:

41. Մարզպետը առաջարկություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ միջհամայնքային միավորումներ ստեղծելու և համայնքները միավորելու վերաբերյալ:

42. մարզպետը իրականացնում է օրենքներով նախատեսված այլ լիազորություններ:

IX. ՄԱՐԶԻ ԽՈՐՀՈՒՐԴ

43. Մարզպետին կից գործում է խորհրդակցական մարմին՝ մարզի խորհուրդ, որի կազմում ընդգրկվում են մարզպետը և համայնքի ղեկավարները:

44. Մարզի խորհրդի նիստերին մարզպետի հրավերով կարող են մասնակցել մարզպետի տեղակալը (տեղակալները), տարածքային ծառայությունների ղեկավարներ, մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցներ, մարզի համայնքների ավագանիների անդամներ, մարզում գործող հասարակական կառույցների անդամներ, զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ և այլ անձինք:

45. Մարզի խորհրդի նիստերը իր սահմանած օրակարգով հրավիրում և վարում է մարզպետը առնվազն երեք ամիսը մեկ անգամ:

46. Մարզի խորհուրդը մարզպետի ներկայացմամբ քննարկում և հաստատում է մարզի խորհրդի աշխատանքների կազմակերպման կարգը. ԽՈՐՀՈՒՐԴԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՀԱՍՏԱՏԵԼ

47. Մարզի խորհրդի նիստերին մարզպետը՝

1) իրազեկում է Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումների, մարզպետի որոշումների ու կարգադրությունների մասին և անհրաժեշտության դեպքում տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացնում է պարզաբանում օրենսդրության փոփոխությունից բխող՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների մասին.

2) ծանոթանում է համայնքներում տիրող իրավիճակին՝ տարվող աշխատանքների ընթացքին և ծագած խնդիրներին.

3) լսում է համայնքների ղեկավարների առաջարկություններն ու դիտողությունները մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության վերաբերյալ.

4) լուծում է կազմակերպական այլ հարցեր:



48. Մարզպետը մարզի խորհրդի քննարկմանն է ներկայացնում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացվող իր հաշվետվությունները՝ մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի և իր գործունեության մասին.

2) մարզի տնտեսական զարգացման տարեկան և երկարաժամկետ ծրագրերը՝ ներկայացնելով իր առաջարկությունները ծրագրերի վերաբերյալ.

3) մարզային զարգացման ծրագրերի իրականացման մոնիթորինգի արդյունքները.

4) Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի և վերահսկողական գործառնություններ իրականացնող պետական այլ մարմինների կողմից մարզում իրականացված ստուգումների արդյունքում կազմված փաստաթղթերը.

5) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով մարզի տարածքում իրականացման համար նախատեսված ծրագրերը.

6) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով, և այլ միջոցներով մարզին վերաբերվող ծրագրերի կատարման ընթացքը.

7) համայնքի ղեկավարի վարքագծի վերաբերյալ իրավապահ մարմիններից ստացված տեղեկատվությունը.

8) այլ հարցեր:

49. Տարածքային ծառայությունների ղեկավարները մարզի խորհրդի քննարկմանն են ներկայացնում իրենց տարեկան աշխատանքային ծրագրերը և տարածքային ծառայությունների ընթացիկ ու տարեկան հաշվետվությունները:

50. Մարզի խորհրդի նիստը հրապարակային է:

51. Մարզի խորհրդի նիստի արդյունքում կազմվում է արձանագրություն, որը հրապարակվում է մարզպետարանի ինտերնետային կայք էջում:

## X. ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՏԵՍՉԱԿԱՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

52. Գործադիր մարմինների կողմից մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումներում իրականացվում են տեսչական ստուգումներ:

53. Տեսչական ստուգումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

54. Տեսչական ստուգման արդյունքում կազմվում է համապատասխան փաստաթուղթ 3 օրինակից: Փաստաթղթի բնօրինակի մեկ օրինակը հանձնվում է մարզպետին, իսկ մյուս օրինակը՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին:

55. Տեսչական ստուգումների արդյունքների հիման վրա համապատասխան հանրապետական գործադիր մարմնի ղեկավարը մարզպետին կարող է ներկայացնել գրավոր հիմնավորված առաջարկություններ կամ ցուցումներ տեղի գտած թերությունները վերացնելու համար: Առաջարկությունների կամ ցուցումների մեկ օրինակը ուղարկվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին:

56. Մարզպետը համապատասխան թերությունները վերացնելու կապակցությամբ ձեռնարկած միջոցների մասին տեղեկացնում է գործադիր մարմնի ղեկավարին և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին: